

ԱՆԱԳԱՊՂԻՆՁԷ ԲՈՒՐՎԱՌ

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՎԱՆՔԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Այս առթիվ պիտի խօսիմ անաղագղինձէ հնադարեան բուրվառի մը մասին (Նոր Զուղայի), զոր քննեցի ու լուսանկարեցի 1937ին այցելութեանս: Այդ բուրվառը հոս կը ներկայացնեմ իբր նկար թիւ 1 եւ 2:

Այս բուրվառին վրայ՝ ինչպէս որ ներկարն ալ ցոյց կու տայ՝ կը գտնուի հայերէն յիշատակարան մըն ալ: Սակայն այդ յիշատակարանը յետին ժամանակներու հայ նուիրողի մը յիշատակութիւնն է ժէ. դարէն: Այս յիշատակարանը այսպէս կը կարդացուի. ԱՅՍ ՓՈՌՎԱՐՍ ՅԻՇԱՍԱԿ Է ՅՈՎՀԱՆՆԵՍԻՆ ԵՒ ԵՂԲԱԻՐՆ ԿՆՈՋՆ ՆԱՆԵԱՐԻՆ ԾՆՈՂԱՅՆ ԳՈՐԳԻՆ ՏԻՐԱՏՈՒՐԻՆ ԹՎԻՆ ՌՁ (1631): Նման բուրվառի մըն ալ հանդիպած եմ համալսարանային երկրորդ պատեմարդմէն քիչ առաջ Պերլինի թանգարանին մէջ, իբր թիւ 4249ա իր: Այս բուրվառին ալ նկարը հոս կու տամ իբր թիւ 3 եւ 4: Պերլինի թանգարանը սոյն բուրվառը կը նշանակէ իբր Միջագետքի քրիստոնէական դործ, մօտաւորապէս է. դարէն. որով Նոր Զուղայի բուրվառը պատրաստուած է վրան այժմ յաւելեալ ժէ. դարու թուականով հայերէն յիշատակարանէն մօտաւորապէս հարար տարի առաջ:

Պատկերադրութեամբ, որ բուրվառին շուրջ կը գտնուի, գրեթէ յար եւ նման է Պերլինի թանգարանին մէջ գտնուածին: Երկուքն ալ ցոյց կու տան տնօրինական տեսարաններ: Իսկ Պերլինինը բուրվառին տակը ունի համակերպող տերեւներով ծաղկազարդ մը: Իսկ տնօրինական նկարներուն տակ դօտի մը 16 կլորակներու մէջ նմանաձեւ, մարմնոյ միայն վերի մասը ներկայացնող մարդաձեւ մը, հաւանա-

բար հրեշտակներ: Նոր Զուղայինը նոյնպէս ունի, այսպէս ըսենք 16 հրեշտակներու դօտին, սակայն բուրվառին տակը կայ զանդրահեր գլուխ մը, պուցէ նոյնպէս հրեշտակ:

Նման բուրվառ մըն ալ գտնուած է Անիի պեղումներէն, այժմ Երեւանի թանգարանին թիւ 1265 համարին տակ պահուած: Վերջերս Հայաստանէն ստացայ Բարկէն Առաքելեանի Քաղաքները եւ արհեստները Հայաստանում Թ-ՓԳ. դդ. (Երեւան, 1958), որուն նկարաշարքին տախտակ թիւ Ժ.2. կը ներկայացնէ այդ թիւ 1265 բուրվառը, որուն տակ գրուած է «Բրոնզէ կանթեղ ձուլածոյ»: Կրեւելի թէ ասոնցմէ մէկէ աւելի կը գտնուին Երեւանի թանգարանին մէջ, քանի որ Առաքելեան մեղի կը ներկայացնէ տախտակ թիւ ԺԲ.ով երկու ուրիշ կտորներ, իբր Անիի թիւ 1324 եւ թիւ 1265¹: Թիւ 1265ը իրաւամբ նշանակուած է «Բրոնզէ բուրվառ», սակայն թիւ 1324ին տակ դարձեալ նշանակուած է «Բրոնզէ կանթեղ»:

Ինծի անմեկնելի է թէ ինչո՞ւ ասոնք նշանակուած են իբր «կանթեղ» երկու անգամ, եւ մէկ անգամ իբր «բուրվառ»: Թիւ 1265ը ըստ երեւոյթի «բուրվառ» նշանակուած է, որովհետեւ կ'երեւի թէ գտնուած է բուրվառի յատուկ շղթաներով, բոժոժով եւ ունելիով: Թէեւ այս 1265 թիւն ալ ուսումնասիրութեան մէջ նշանակած է «կանթեղ» (էջ 159, ա. սիւն): Այս առթիւ հոս յառաջ կը բերեմ Բարկէն Առաքելեանի գրածը այս անաղագղինձէ անթիւնբուն համար:

1. Ասիկա վրիպակ է եւ պէտք է ըլլայ թիւ 1321: Այս մասին քիչ վերջ:



Նկար Թ. 1 - Նոր Զուղայի «Ամեհափրկիչ» վանքի թանգարանի անաղագղինձէ բուրվառը:


«Այս սովորական տիպի կաղապարով են ձուլուած նաեւ Անիի կանթեղներն ու բուրվառները: Կանթեղներից մէկը (ՊՊԹ. թիւ 1316) գտնուել է Գաղիկի տաճարում 1905 թուին, ունի 10 սմ. բարձրութիւն, բերանի բացուածքը 11,5 սմ. է: Կանթեղը համարեա զնգաձեւ է, ունեցել է երեք ունի կախելու համար եւ երեք փոքր ունիկեր առաջինների միջեւ, սակայն առանց անցքի: Կանթեղի վրայ բարձր ռելիեֆ պատկերներ կան աւետարանից, այն է՝ Քրիստոսի ծնունդը, մկրտութիւնը, խաչելութիւնը եւ յարութիւնը: Պատկերները չեւոթի են. զործին չեն օգնել նաեւ նրանց կոպիտ են. զործին չեն օգնել արուած զգեստների վրայ մետաղէ գրչով արուած զծիկները: Յատակի վրայ գրից ռելիեֆ կերպով պատկերուած է Տիրամայրը կամ Քրիստոսը զահոյքի վրայ»:

«Մի ալ կանթեղ (ՊՊԹ. թիւ 1265) ճիշտ նոյն չափերի եւ նոյն ձեւի է, բայց ռելիեֆ պատկերներն արուած են բարձր արուեստով: Այս կանթեղի վրայ պատկերուած են Քրիստոսի ծնունդն ու մկրտութիւնը, Մարիամը, զինուորներ, կատարող, հրեշտակներ: Կանաչ պատկերուած են տեղական շատ հետաքրքիր տարրով՝ սրածայր գլխարկներով, սրածայր կօշիկներով, ծնկներից վերեւ երեւում են կանանց վարտիքների փողերը, որը նոյն-

պէս բնորոշ է տեղական տարազի համար: Կանթեղի եզերքին գրչով փորագրուած է բուսական օրնամենտ, իսկ յատակին գրից պատկերուած է Քրիստոսը զաւազանը ձեռքին, շուրջը ռելիեֆ բուսական օրնամենտ: Կան կանթեղների ուրիշ օրինակներ եւս »:

«Ճիշտ այս կանթեղների նման են, բայց նրանցից մի քանի անգամ փոքր՝ բուրվառները, որոնք ձուլման եւ դարձարման տեխնիկայով ոչնչով չեն տարբերուում կանթեղներից: Գաղիկի Կեղեղեցու (Անիի) մէջ է գտնուել բուրվառներից մէկը (ՊՊԹ. թիւ 1321). սրա վրայ պահպանուել են երեք ունիկերն անցկացրած շղթաները, որոնցից մէկի վրայ ամրացուած է մի բրոնզէ բոժոժ: Բարձր ռելիեֆ պատկերները (աւետում, ծնունդ, մկրտութիւն եւ խաչելութիւն, իսկ յատակին՝ Տիրամայրը զահոյքի վրայ) արուեստով վերելում նկարադրուած կանթեղների համեմատութեամբ միջին տեղ են զբաղում: Եզերքներին փորագրուած է ոչ խոր բուսական օրնամենտ» (էջ 159):

Ունինք կատարելիք ճշտումներ:



Նկար Թ. 2 - Թիւ 1 բուրվառին ներքեւի կողմը:

Առարկաներու քիւրերը

ՊՊԹ կը նշանակէ Հայաստանի Պետա-

